**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 391

*18 մայիս 2026թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նարգիզ Վարազդատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 22122017-07-0075) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, թիվ 3 հասցեում գտնվող 0.7 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի) 0.6009 հա մակերեսով (բաժանվող հատված ) հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 11 հողամաս , իսկ մնացած 0.0991 հա մակերեսով (բաժանվող հատված ) հողամասի հասցեն՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, Արտադրական թաղամաս, 12 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ**
**Ո. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 392

*19 մայիս 2026թ.*

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխության, հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական լուծումների փոփոխության, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին, չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար, հիմք ընդունելով փաստացի չափագրող «ԳԵՈԼԵՆԴ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փաստացի չափագրման հիման վրա կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև Գերասիմ Վաղարշակի Գալստյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գերասիմ Վաղարշակի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 07-010-0147-0010 կադաստրային ծածկագրով, 0.3 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել՝ գյուղատնտեսական, խոտհարք:

2. Սույն փոփոխությունները կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Պ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 393

*19 մայիս 2026թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N132-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Միհրան Իզմիրի Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող ( սեփականության վկայական N 2183315 տրված 06 մայիսի 2006թ), 0.072 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամասի 2-րդ փողոց, 7 կիսակառույց:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ**
**Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 394

*20 մայիս 2026թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍՑՈՂ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ 68/6 ՇԵՆՔԻ 26 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի, 1-ին մասի, 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 147 որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/6 շենքի 26 հասցեում գտնվող բնակարանը անհատույց օտարել Սուսան Սերոժի Սաֆարյանին ( ծնված 1957 թվականի նոյեմբերի 10-ին, անձնագիր AV0472255, տրված 03.10.2019թ., 049 կողմից):

2.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՊ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 395

*20 մայիս 2026թ.*

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վայն Սթոր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Օրբելի եղբայրներ փողոց, թիվ 18/ տրամադրել՝ 2026 թվականի ամառային սեզոնին իրենց օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքում հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն՝ 60 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ո. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀՀ
МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ
RA KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
03027029

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 396

*20 մայիս 2026թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՌԵԶՈՐԹ ՄԵԴԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնք, Սարալանջի, Տանձաղբյուրի, Խաչատուր Կեչառեցու, Եղիշե Չարենցի, Մհեր Մկրտչյանի, Օրբելի եղբայրների,Վլադիմիր Հարությունյանի, Գրիգոր Մագիստրոսի փողոցներում 2026 թվականի մայիս ամսվա ընթացքում 228 քմ ընդհանուր մակերեսով այլ արտաքին գովազդ, դատարկ վահանակներ 111 քմ, սոցիալակն գովազդ 18 քմ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 397

*21 մայիս 2026թ.*

ՄԻՇԱ ԷԴԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Միշա էդիկի Գրիգորյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Միշա էդիկի Գրիգորյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր, գ. Գոռգոչ, 3-րդ փողոց 1/1 հասցեում գտնվող, (վկայական համար 20052026-07-0163, կադաստրային ծածկագիր 07-045-1182-0002) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,0547 հա մակերեսով հողամասը՝ 1 027 102 /մեկ միլիոն քսանյոթ հազար հարյուր երկու/ Հայաստանի Հանրապետության դրամով որը անհրաժեշտ է վճարել 900125006305 հաշվեհամարին և իր կողմից կառուցված 42,6 ք.մ. արտաքին և 32,31 ք.մ. ներքին մակերեսով բնակելի տունը՝ 137 835/ հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր երեսունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամով , որը անհրաժեշտ է վճարել 900125003492 հաշվեհամարին:

2.Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր, գ. Գոռգոչ, 3-րդ փողոց 1/1 հասցեում գտնվող հողամասի պետական գրանցում և միասնական տեղեկանք ստանալու համար կատարված վճարումները՝ որոնք կազմել են 62 000 ( վաթսուներկու հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ, անհրաժեշտ է որպես փոխհատուցում վճարել 900125006024 հաշվեհամարին :

3. Միշա էդիկի Գրիգորյանի հետ կնքել շինության և հողամասի օտարման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 398

*21 մայիս 2026թ.*

ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 10-ի թիվ 13 որոշումը և Ծաղկաձոր համայնքի բնակիչ՝ Նինել Հարությունյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ծաղկաձոր համայնք քաղաք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի 13 հասցեի բնակիչ՝ Նինել Հարությունյանի որդուն՝ Ալեքս Սաֆարյանին տրամադրել դրամական խրախուսանք 30 000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության լեռնադահուկային սպորտի և ոլորավայրէջք մարզաձևում երրորդ հորիզոնականը զբաղեցնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ո. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 399

*21 մայիս 2026թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխության, հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական լուծումների փոփոխության, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին,չի գտնվում օրեսնդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Միհրան Իզմիրի Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող , մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամաս , 2-րդ փողոց 7 հասցեում գտնվող 0,072 հա մակերեսով հողամասից 0,0044 հա մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը բնակավայրերի, այլ հողատեսքից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

2. Նշված փոփոխությունը կատարել նաև Ծաղկաձոր համայնքի կադաստրային քարտեզում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ**
**Ո. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 400

*21 մայիս 2026թ.*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026YMQSKD , և հիմք ընդունելով Արման Էդուարդի Մարգարյանի կողմից լիազորված անձ ՝ Դավիթ Աղաջանյանի դիմումը ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր քաղաք, Տանձաղբյուրի փողոց 4/39 հասցեում գտնվող, Արման Էդուարդի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական՝05102020-07-0065) 0,036 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 74,9 քմ ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական շինությունը :
2. Շինության օրինականացման համար սահմանել վճար՝ 480 259 (չորս հարյուր ութսուն հազար երկու հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ**
**Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 401

*25 մայիս 2026թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխության, հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական լուծումների փոփոխության, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին, չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար, հիմք ընդունելով փաստացի չափագրող «ԳԵՈԼԵՆԴ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փաստացի չափագրման հիման վրա կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև Գերասիմ Վաղարշակի Գալստյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շավարշ Արշավիլի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 07-010-0147-0014 կադաստրային ծածկագրով, 0.5517 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել՝ գյուղատնտեսական, խոտհարք:

2. Սույն փոփոխությունները կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Պ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 402

*25 մայիս 2026թ.*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026DLM48Q , և հիմք ընդունելով Մարատ Հարությունի Զաքարյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, գյուղ Փյունիկ 1-ին փողոց 1-ին նրբանցք , 1-ին փակուղի 10 հասցեում գտնվող, Մարատ Հարությունի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական՝ 2138878) 0,1 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 147,8 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի շինությունները:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինության օրինականացման համար սահմանել վճար՝ 210 172 (երկու հարյուր տասը հազար հարյուր յոթանասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125004250 հաշվեհամարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 403

*26 մայիս 2026թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ,ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Էյթի Էյթ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց 34/1/ տրամադրել՝

1) 2026 թվականի 2-րդ եռամսյակների ընթացքում 1001 քմ տարածքում հանրային սննունդ կազմակերպելու թույլտվություն,

2) 2026 թվականի 2-րդ եռամսյակների ընթացքում 1001 քմ տարածքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 404

*29 մայիս 2026թ.*

<<ՏԱՆԱԱՏ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածի 54-րդ և 60-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի N 56 որոշումը, Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի մարտի 31-ի N 1/փ-117 եզրակացությունը և <<ՏԱՆԱԱՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Գոռ Առաքելյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքում գտնվող 07-005-0026-0987 կադաստրային ծածկագրով, <<ՏԱՆԱԱՏ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1,0001 հա մակերեսով հողամասի՝ նպատակային և գործառնական նշանակությունները՝ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված հողերից փոխել և պատկերել որպես բնակավայրերի, հասարակական կառուցապատման համար նախատեսված հողերի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 405

*29 մայիս 2026թ.*

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխության, հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական լուծումների փոփոխության, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին, չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար, հիմք ընդունելով փաստացի չափագրող «ԳԵՈԼԵՆԴ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փաստացի չափագրման հիման վրա կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև Աննա Ժորայի Սեդրակյանի սեփականության իրավունքի թիվ 2481651 վկայականը `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Աննա Ժորայի Սեդրակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 07-045-0469-0076 կադաստրային ծածկագրով, 0.2 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել՝ գյուղատնտեսական, այլ հողատեսք:

2.Սույն փոփոխությունները կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 406

*29 մայիս 2026թ.*

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Անհատ Ձեռնարկատեր Գևորգ Մարտիրոսյանին /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Չարենցի փողոց թիվ 40/ տրամադրել՝

1) 2026 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 24.5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ**
**Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 407

*01 հունիս 2026թ.*

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2026 թվականի մայիսի 8-ի թիվ 640-Լ որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականի կաթի արտադրության համար սուբսիդավորման տրամադրման միջոցառումը (այսուհետ՝ միջոցառում) իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
1) հանձնաժողովի նախագահ՝ Մակիչ Դանիելյան - Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավար.
2) հանձնաժողովի անդամ՝ Վոլոդյա Հովհաննիսյան - Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավար.
3) հանձնաժողովի անդամ՝ Արծրուն Գևորգյան - Հանքավան բնակավայրի վարչական ղեկավար.
4) հանձնաժողովի անդամ՝ Արթուր Քարամյան - Մարմարիկ բնակավայրի վարչական ղեկավար.
5) հանձնաժողովի անդամ՝ Ռեմ Հովհաննիսյան - Արտավազ-Փյունիկ բնակավայրերի վարչական ղեկավար.
5) հանձնաժողովի անդամ՝ Ռոմեր Ալեքսանյան - համայնքի ղեկավարի խորհրդական.
6) հանձնաժողովի անդամ՝ Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբան - Լիլիթ Ենոքյան
7) հանձնաժողովի անդամ՝ անասնաբույժ- Սամվել Խաչատրյան

2. Հանձնարարել՝ ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Մոնիկա Բալբաբյանին շաբաթական պարբերականությամբ մարզպետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն շահառուների վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 408

*01 հունիս 2026թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 139 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 29-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայրի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին » N 139 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ